

**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՍՄ-ՄՀ-ՀՐՄԱՇՁԲ-20/3**

ք. Մեղրի

«07» օգոստոս 2020թ.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքը», ի դեմս համայնքի ղեկավար Մ. Զաքարյանի, որը գործում է օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԲԵՍԹ ՌՈՌԻԴ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մեղրի համայնքի մանկապարտեղ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարկան նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 25 դեկտեմբերի 2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փոփոխումների և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### 3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 229 000 000 (երկու հարյուր քսանինը միլիոն) ՀՀ դրամ, որից 38 166 667 (երեսունութ միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնա- ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***  
**«ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Գ/Գ	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. Գին	Գումար
1	2	3	4	5	6
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
1	Փայտյա դրների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	185	0,323	59,755
2	Փայտյա պատուհանների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	469,80	0,323	151,745
3	Մոզայիկ հատակի քանդում	մ <sup>2</sup>	331	0,539	178,409
4	Մանրահատակի քանդում	մ <sup>2</sup>	1538,4	0,539	829,198
5	Լինոլեումե հատակի քանդում	մ <sup>2</sup>	196,4	0,647	127,071
6	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	248,4	0,647	160,715
7	Ցեմենտ-ավազային հարթեցնող շերտի քանդում	մ <sup>2</sup>	2335,0	0,216	504,360
8	Գաջի սվաղի քանդում պատերից	մ <sup>2</sup>	1146,6	0,323	370,352
9	Հախճասալի քանդում պատերից	մ <sup>2</sup>	55,5	0,323	17,927
10	Գաջի սվաղի քանդում առաստաղներից	մ <sup>2</sup>	135,5	0,431	58,401
11	Կախովի առաստաղի ապամոնտաժում	մ <sup>2</sup>	158,9	0,431	68,486
12	Շիկացման լամպերով լուսատուների ապամոնտաժում	հատ	256	2,155	551,680
13	Էլեկտրական վահանակների ապամոնտաժում	հատ	6	5,388	32,328
14	Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	262	3,233	847,046
15	Ջուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	58	3,233	187,514
16	Լոզնոցի ապամոնտաժում	հատ	1	16,165	16,165
17	Լվացարանների ապամոնտաժում	հատ	32	3,233	103,456
18	Երկտեղանոց խոհանոցակոնքերի ապամոնտաժում	հատ	16	1,347	21,552
19	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Ø50մմ, Ø100մմ	զմ	450	0,647	291,150
20	Ջրամատակարարման պողպատե խողովակների ապամոնտաժում Ø15-32մմ	զմ	659	0,647	426,373
21	Սետաղական ճաղաչարի ապամոնտաժում	զմ	84	0,862	72,408
22	Առաջացած շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ	տ	368	2,802	1031,136
	<b>Ընդամենը</b>				<b>6107,225</b>
	<b>Բացվածքներ</b>				
1	Արտաքին պատերում բացվածքների շարում թեթևաբետոնե բլոկներից 190x400x200մմ չափերի	մ <sup>3</sup>	30,00	17,512	525,360
2	Շարվածքի անրանավորում	տ	0,45	370,441	166,698
3	Անրան Ø12A500c	տ	0,300	370,441	111,132
4	Անրան Ø5Bp-I /ցանց/	տ	0,150	513,229	76,984
5	Դատարկությունների լցում մանրահատիկ թեթև բետոնով B10	մ <sup>3</sup>	11,2	43,779	490,325
	<b>Ընդամենը</b>				<b>1370,500</b>
	<b>Դռներ</b>				
1	Ալյումինե ապակեփաթեթով ապակեպատված, ջերմակամրջակով դռների տեղադրում, /ներառյալ ապակեպատումը սարքերը, կողպեքը, ներկումը/	մ <sup>2</sup>	64,38	48,494	3122,044
2	Սետաղապլաստե ապակեփաթեթով ապակեպատված դռների տեղադրում /ներառյալ ապակեպատումը, սարքերը, կողպեքները, ներկումը/	մ <sup>2</sup>	183,96	45,126	8301,379
3	ՄԺՓ-ից դռների տեղադրում	մ <sup>2</sup>	8	30,982	247,856
4	Դռների արգելափակիչներ	հատ	22	8,069	177,518

	<b>Ընդամենը</b>				<b>11848,797</b>
	<b>Պատուհաններ</b>				
1	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60 մմ հաստ 4+4 մմ ապակեպատված, պատուհանների տեղադրում, /ներառյալ ապակեպատումը սարքերը, բռնակփակիչները/ բացվող	մ <sup>2</sup>	252,66	30,982	7827,912
2	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60 մմ հաստ 4+4 մմ ապակեպատված, պատուհանների տեղադրում, /ներառյալ ապակեպատումը սարքերը, բռնակփակիչները/ չբացվող	մ <sup>2</sup>	318,79	26,268	8373,976
3	Ներքին պլաստասե պատուհանագոգերի իրականացում, 300մմ	մ <sup>2</sup>	131,31	2,021	265,378
4	Պատուհանագոգի արժեքը	գծմ	437,65	5,388	2358,058
5	Արտաքին բազալտե պատուհանագոգերի իրականացում, 20մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	65,6	7,092	465,235
6	Սիջատապաշտպան ցանց	մ <sup>2</sup>	126,35	6,735	850,967
	<b>Ընդամենը</b>				<b>20141,526</b>
	<b>Հատակներ</b>				
1	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	2372,7	1,212	2875,712
2	Քսուկային ջրամեկուսացում ցերեզիտով /1ին հարկում ամբողջությամբ, 2-րդ հարկում թաց կետերում/	մ <sup>2</sup>	1834,7	4,378	8032,317
3	Հատակների պատրաստում պրեսգոանիտից	մ <sup>2</sup>	603,5	5,388	3251,658
4	Խեցեսալե հատակների պատրաստում	մ <sup>2</sup>	167,9	4,378	735,066
5	Վինիլային հատակի պատրաստում 2մմ հաստությամբ ներառյալ ՄՂՖ շրիշակները	մ <sup>2</sup>	1415,5	4,715	6674,083
6	Վինիլային հատակի պատրաստում 4մմ հաստությամբ ներառյալ ՄՂՖ շրիշակները	մ <sup>2</sup>	119,8	3,368	403,486
7	Լամինատե հատակի պատրաստում, 10մմ հաստությամբ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/	մ <sup>2</sup>	66	4,378	288,948
8	Պրեսգոանիտե շրիշակների տեղադրում h=10սմ	գմ	645,7	2,950	1904,815
	<b>Ընդամենը</b>				<b>24166,085</b>
	<b>Տանիք</b>				
1	Օղակոխության հորանների շարում թեթևաբետոնե բլոկներից 100մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	42,5	5,523	234,728
2	Շարվածքի ամրանավորում	տ	0,25	370,441	92,610
3	Ամրան Ø12A500c	տ	0,029	370,441	10,743
4	Ամրան Ø6A240c	տ	0,005	370,441	1,852
5	Բլոկերի դատարկությունների լցում թեթև բետոնով B12.5	մ <sup>3</sup>	0,5	18,859	9,430
6	Հիմնակմախքի պատրաստում □20x20x2մմ քառակուսի կտրվածքի խողովակներից	տ	0,2	513,229	102,646
7	Ծածկույթների պատրաստում ցինկապատ թիթեղից 0.7մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	25,2	4,041	101,833
8	Օղակոխության հորանների արտաքին պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով ցանցի վրա Ø3Bթ 50x50մմ բջիջներով /ներառյալ մետաղացանցը եւ դրա հիմնակմախքի պատրաստումը	մ <sup>2</sup>	42,5	3,296	140,080
	<b>Ընդամենը</b>				<b>693,921</b>
	<b>Ներքին հարդարում</b>				
1	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի	մ <sup>2</sup>	2658,8	1,684	4477,419
2	Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով բարելավված որակի	մ <sup>2</sup>	734,01	1,684	1236,073
3	Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ <sup>2</sup>	2585,2	1,482	3831,266
4	Պատերի երեսապատում հախճասալով h=2.8մ	մ <sup>2</sup>	734,06	6,062	4449,872
5	Պատերի ջերմամեկուսացում Պենոպլեքսով 50 մմ հաստ	մ <sup>2</sup>	575,2	5,543	3188,334
6	Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի	մ <sup>2</sup>	2658,8	2,021	5373,435
7	Կախովի առաստաղի պատրաստում շերտավոր պլաստիկից, մետաղական հիմնակմախքով	մ <sup>2</sup>	167,9	4,378	735,066
8	Առաստաղի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ <sup>2</sup>	2204,8	2,021	4455,901
9	Շեփերի գաջե սվաղում	մ <sup>2</sup>	278,18	2,425	674,587
10	Շեփերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ <sup>2</sup>	278,18	2,088	580,840
11	Աստիճանների եւ հարթակների տակ գաջե սվաղում	մ <sup>2</sup>	54	2,425	130,950
12	Սվաղած մակերեսների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկումով	մ <sup>2</sup>	54	1,347	72,738
13	Կոյուղու կանգնակների եւ օդատարների երեսապատում ջրակայուն գիպսատվարաթղթով 12.2մմ հաստությամբ, մեղաղական հիմնակմախքով	մ <sup>2</sup>	110	4,378	481,580

	Ընդամենը				29688,060
	<b>Արտաքին հարդարում</b>				
1	Արտաքին պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով ամրանային ցանցի վրա 30մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	335,28	1,347	451,622
2	Արտաքին շեպերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով ամրանային ցանցի վրա, 30մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	92,73	1,347	124,907
3	Պատուհանների շուրջը ջերմամեկուսացում հանքային բամբակով 70մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	175,08	4,378	766,500
4	Արտաքին պատերի և շեպերի ներկում գունավոր ֆասսադային ներկով, ծեփամածկումով, շեպերի հետ միասին անկյունակների կիրառմամբ	մ <sup>2</sup>	428	3,992	1708,576
5	Գույքային փայտամածի տեղադրում եւ ապամոնտաժում արտաքին աշխատանքների համար /3 անգամ, նույն նյութով/	100 մ <sup>2</sup>	1,78	215,529	383,642
	Ընդամենը				3435,247
	<b>Տոկոսը ամբողջի համեմատ</b>				1,98
	<b>Սալվածք</b>			0,000	0,000
1	Նախապատրաստական շերտի իրականացում բազալտե խճից 10սմ հաստությամբ, սալվածի տակ	մ <sup>2</sup>	257	6,062	1557,934
2	Սալվածքի ծածկույթի իրականացում միջնահատիկ ասֆալտաբետոնե խտնուրդից 4սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	257	3,772	969,404
3	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի, բետոնե հիմքով	զմ	360,7	2,95	1064,065
	Ընդամենը				3591,403
<b>Ընդամենը 1 ուլ</b>					<b>101042,764</b>
1	Գազով աշխատող պատի կոնդենսացիոն կաթսա "Viessman" Vitodens 200-W կամ համարժեք Q=80կվա	կ-տ	2	2155,294	4310,588
2	Կաթսայի շրջանառու պոմպ "Wilo" TOP-S 30/7 կամ համարժեք Q=5մ <sup>3</sup> /ժ, H=7.0մ ավտոմատիկայով	կ-տ	2	572,5	1145,000
3	Հիդրավլիկ սլաք Ø150մմ	կ-տ	1	23,574	23,574
4	ճնշումային ընդարձակիչ բաք "Varem" կամ համարժեք V=100լ,	կ-տ	1	90,926	90,926
5	ճնշումային ընդարձակիչ բաք "Varem" կամ համարժեք V=24լ,	կ-տ	1	80,824	80,824
6	Կաթսաների բաժանարար սանրիք Ø108xմմ, L=800մմ	կ-տ	1	57,25	57,250
7	Կաթսաների հետադարձ սանրիք Ø108xմմ, L=800մմ	կ-տ	1	60,618	60,618
8	Մեկուսիչ խողովակ Ф100	զծմ	16	1,212	19,392
9	Մեկուսիչ խողովակ Ф80	զծմ	15	1,01	15,150
10	Մեկուսիչ խողովակ Ф65	զծմ	11	0,876	9,636
11	Ջեռուցման պլումինե մարտկոցների տեղադրում	էքմ	240	2,923	701,520
12	Ջեռուցման պլումինե մարտկոցների արժեքը H=500մմ, T <sub>1</sub> =700°C, T <sub>2</sub> =500°C, q=100կտ	սեկ-ցիա	1290	6,062	7819,980
13	Ջտիչ Ø50մմ	հատ	2	16,838	33,676
14	Հետադարձ փական Ø40մմ	հատ	4	30,309	121,236
15	Հետադարձ փական Ø25մմ	հատ	1	26,941	26,941
16	Փական Ø50մմ	հատ	12	16,838	202,056
17	Փական Ø32մմ	հատ	4	13,471	53,884
18	Փական Ø25մմ	հատ	1	13,471	13,471
19	Փական Ø20մմ	հատ	5	16,838	84,190
20	Սողնակային փական 3"	հատ	2	50,515	101,030
21	Դատարկման ծորակ Ø25մմ	հատ	5	8,082	40,410
22	Դատարկման ծորակ Ø20մմ	հատ	50	8,082	404,100
23	Օդահան ծորակ Ø15մմ /ավտոմատ/	հատ	27	10,103	272,781
24	Ջերմաչափ	հատ	4	16,838	67,352
25	ճնշաչափ	հատ	5	23,574	117,870
26	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø63x8.9մմ հիդրավլիկ փորձարկումով, մեկուսացումով	զմ	143	2,021	289,003
27	Պողպատե էլեկտրաեռակցվող խողովակ Ф89x3,5 , տեղադրումով	զմ	15	1,482	22,230
28	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø40x5.5մմ հիդրավլիկ փորձարկումով, մեկուսացումով	զմ	128	1,01	129,280
29	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø32x4.4մմ հիդրավլիկ փորձարկումով, մեկուսացումով	զմ	147	1,01	148,470

30	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø25x3.5մմ հիդրավիլի փորձարկումով, մեկուսացումով	զմ	1095	0,808	884,760
31	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Ø20x2.8մմ հիդրավիլի փորձարկումով, մեկուսացումով	զմ	1170	0,808	945,360
32	Խողովակների ներկում հակակոռոզիոն ներկով	քմ	9	1,684	15,156
33	Խողովակների հիդրավիլի փորձարկում	զմ	33	0,404	13,332
34	Ֆիտինգներ պոլիպրոպիլենային խողովակների համար /տարբեր/	հատ	2245	0,034	76,330
35	Կարգավորող կափույր Ø15մմ	հատ	204	4,041	824,364
36	Փակող կափույր Ø15մմ	հատ	204	4,378	893,112
37	Ալյումինե մարտկոցների մոնտաժային կոմպլեկտ	հատ	204	3,368	687,072
<b>Ընդամենը 2 ով</b>					<b>20801,924</b>
1	Ներածող կանալային սարք ՆՀ1 ՆՀ2 L=1200մ <sup>3</sup> /ժ, H=150սա	կ-տ	2	43,779	87,558
2	Կանալային կենտրոնախույս օդամուղ L=1300լսմ/ժ H=350 ՊԱ	հատ	1	40,412	40,412
3	Կանալային կենտրոնախույս օդամուղ L=1200լսմ/ժ H=120 ՊԱ	հատ	1	37,044	37,044
4	Կանալային կենտրոնախույս օդամուղ L=600լսմ/ժ H=250 ՊԱ	հատ	1	30,309	30,309
5	Կանալային կենտրոնախույս օդամուղ L=300լսմ/ժ H=250 ՊԱ	հատ	12	23,574	282,888
6	Կանալային կենտրոնախույս օդամուղ L=200լսմ/ժ H=100 ՊԱ	հատ	1	22,226	22,226
7	Կանալային կենտրոնախույս օդամուղ L=50լսմ/ժ H=100 ՊԱ	հատ	1	20,206	20,206
8	Առանցքային օդամուղ L=75լսմ/ժ H=30 ՊԱ	հատ	13	57,25	744,250
9	Առանցքային կենտրոնախույս օդամուղ L=50լսմ/ժ H=30 ՊԱ	հատ	4	43,779	175,116
10	Առանցքային կենտրոնախույս օդամուղ L=125լսմ/ժ H=30 ՊԱ	հատ	44	65,312	2873,728
11	Պատերի մեջ անցքերի բացում 200x200	հատ	44	3,368	148,192
12	Կլոր դիֆուզոր 150	հատ	48	4,378	210,144
13	Կլոր դիֆուզոր 150	հատ	2	4,041	8,082
14	Ձայնախլացուցիչ TKU 45-20 /կամ համարժեք/	հատ	2	23,574	47,148
15	Ձայնախլացուցիչ TKU 40-20 /կամ համարժեք/	հատ	1	18,859	18,859
16	Ճկուն մեղրիկ DV 45-20 /կամ համարժեք/	հատ	4	4,041	16,164
17	Կարգավորիչ ճաղավանդակ ճ200III 600x100մմ	հատ	1	5,388	5,388
18	Կարգավորիչ ճաղավանդակ ճ200II 400x150մմ	հատ	4	4,445	17,780
19	Կարգավորիչ ճաղավանդակ ճ200I 250x100մմ	հատ	2	3,57	7,140
20	Կարգավորիչ ճաղավանդակ ճ200I 200x100մմ	հատ	2	3,233	6,466
21	Կարգավորիչ ճաղավանդակ ճ150III 500x150մմ	հատ	6	2,425	14,550
22	Կարգավորիչ ճաղավանդակ ճ150II 300x100մմ	հատ	3	2,155	6,465
23	Կարգավորիչ ճաղավանդակ ճ150II 300x150մմ	հատ	1	1,886	1,886
24	Կարգավորիչ ճաղավանդակ ճ150I 150x100մմ	հատ	13	1,684	21,892
25	Օդատարների անցկացում ցինկապատ պողպատից ուղղանկյուն կտրվածքով ճ=0.5մմ	մ <sup>2</sup>	201	2,357	473,757
26	Օդատարների անցկացում ցինկապատ պողպատից ուղղանկյուն կտրվածքով ճ=0.6մմ	մ <sup>2</sup>	25	2,694	67,350
27	Օդատարների անցկացում ցինկապատ պողպատից ուղղանկյուն կտրվածքով ճ=0.7մմ	մ <sup>2</sup>	78	3,233	252,174
28	Օդատար ՊՎՔ խողովակներից Ø125	զմ	48	0,876	42,048
29	Օդատար ՊՎՔ խողովակներից Ø100	զմ	47	1,01	47,470
30	Օդընդունիչ ճաղավանդակ 500x250մմ	հատ	1	3,368	3,368
